ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5030-Ա « 12 » դեկտեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ ԱԼԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածով, աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանը՝

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝

1) սույն որոշման հավելվածի համաձայն՝ կազմակերպել և ապահովել «Երևանի Ավանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» և «Երևանի Մալաթիա-Սեբաստիա շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենների (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոններն զբաղեցնելու մրցույթների (այսուհետ՝ Մրցույթ) նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման իրականացումը.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության օժանդակությամբ ապահովել սույն որոշման հավելվածի համապատասխան, հայտարարության հրապարակումը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում՝ (www.yerevan.am).

3) ապահովել մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիներից դիմումների և դիմումին կից ներկայացվող այլ անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը և մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

2.Ընդունել ի գիտություն, որ մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման N 1 դահլիճում:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

4.Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 1
Երևանի քաղաքապետի
2025թ. դեկտեմբերի 12 -ի
հ. 5030-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց
«ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ ԱԼԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Թափուր պաշտոնի անվանումը	Մրցույթ անցկացնելու վայրը, օրը և ժամը	Հայտարարության հրապարակման օրը
1.	«Երևանի Ավանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.01.2026թ. ժամը՝ 11:00	12.12.2025թ.
2.	«Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.01.2026թ. ժամը՝ 11:00	12.12.2025թ.
3.	«Երևանի Մալաթիա-Սեբաստիա շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն	ք. Երևան, Արգիշտիի 1 14.01.2026թ. ժամը՝ 11:00	12.12.2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**